

## ՄԵՆՔ ԶԵՆՔ ԿԱՐԴՈՒՄ

Ամեն մի ազգի գրագէտ մարդկանց թուի քանակութեամբ չափում են այդ ազգի մտաւոր զարգացման սատիճաննը: Ամեն մի պատմաբան, հրապարակախոս, քաղաքագէտ երրոր կամենում է խօսել «ըև է ժողովրդի քաղաքակարթութեան մասին, նախ նա կամենում է վիճակազրական տեղեկութիւններ ձեռք բերել այն մասին թէ որքան այդ ազգի մէջ տարածուած է գրագիտութիւնը, ընթերցանութիւնը և գիլքը: Չնայելով, որ ամեն մի հայ շատ մեծ կարծիք ունի իւր ազգի ընդունակութիւնների և արժանաւորութիւնների մասին, սակայն անժխտելի ճշմարտութիւն է, որ հայը շատ քիչ է կարդում, սանաւանդ մալրենի լեզուով. իսկ եթէ կարգում է՝ աշխատում է ձրի կարդալ: Եւ այս հանգամանքը այնպիսի մեծ դժբաղտութիւն է և կորստաբեր մի հտնգամանք, որ պէտք է մտածել այս մասին:

Նախ ապացուցի կարօտ չէ այն փաստը, որ հայ ինտելիգենցիան, այսպէս սասած, բարձրագոյն և միջին գլորոցների սաները, շատ չնչին բացառութեամբ, տղէտ է և անգրագէտ և շատ քիչ է կարդում, իսկ մալրենի լեզուի վերաբերմամբ կատարեալ տնգէտ: Եւ որովհետեւ ժողովրդի աղը ինտելիգենցիան է, շատ հասկանալի է թէ ինչ կլինի այն ժողովուրդը. որի ինտելլիգենցիան ալլպէս է. իսկ ինտելլիգենցիաի օրինակը վարակիչ է և զօրեղ: Նոյն իսկ մեր շրջապատող հարկան ազգերի ինտելիգենցիալի համեմատութեամբ մենք միանգամայն ստոր ենք կանգնած: Այս որ անուըանալի մի փաստ է, որ վրաց լրագիրները և գրքերը տարածուած են անհամեմատ աւելի շատ քան թէ մեր ամսագիրներն ու թերթերը, թէև թուով ի հարկէ հայ ինտելիգենցիան անհամեմատ շատ է:

Կովկասում բարձր և բարձրագոյն գլորոց աւարտած հայերի թիւը մօտ տասը հազար է, բայց հայ լըքագիրներ և գրքեր կարգացողի թիւը երեք հազարի էլ չի հասնում. որա պատճառները բազմաթիւ են, որոնցից մէկն էլ հայ ինտելիգենտի ծուլութիւնն է: Հայելքն կարդալու համար նա պէտք է մի փոքր աշխա-

տանք գործ դնի լեզուի հետ ընտելանալու։ Այս չնշին աշխատանքը նա լանձն չի առնում։ Բայց որովհետեւ տգէտ հասարակութեան մէջ է ապրում՝ իւր այս յատկութեամբ ոչինչ չէ կորցնում։ Այս տեսակ հայ մեր հասարակութեան մէջ մինչև անգամ կարող է լաւ գործիչ համարուել։

Այս տեսակ պայմաններում ահա միւս կողմից մեր ջահիլներն էլ հեղեղում են մեր գրականութիւնը անթիւ անհամար բրօշիւրներով, վէպիկներով, դրամաներով, ոտանաւորներով և ամեն տեսակ հեղինակութիւններով, որ ոչ միայն ոչ ոք չի կարդում, ալլ և գրժուար է կարդալ։ Երբոր մէկին կշամբում էք, թէ ինչու նա հայերէն չէ կարդում, իսկոյն ասում են, որ գիրք չկայ. և արդարեն մեր ներկայ կովկասեան հայ գրականութիւնը շատ մանրացել է և բացի մի երկու երեք համեմատաբար հին գրողներից նորերը շատ թոյլ են և մեծամիտ։ Այս հանդամտնքը ի հարկէ չէ արդարացնում առհասարակ մալրենի լեզուով չկարդացողին, բայց լայտնի նշանակութիւն ունի։

Խմբագրութիւնս ամեն օր ստանում է բազմաթիւ մանր-մունը գրքեր և ոչ մէկը նրանցից ոչ միայն գիտութեան և տաղանդի նշոյլ չէ պարունակում, ալլ ուղղակի գէվգէկութիւններ են, որոց վրայ փող մսիսել և տաղագրել չարժէ։ Մենք խորհուրդ կը տանք գրելացաւով հիւանդ երիտասարդներին ափսոսալ իրենց ժամանակը և փողը, իսկ եթէ հիւանդութիւնը անբուժելի է՝ գոնէ ընտրութեամբ թարգմանութիւններ անէին եւրոպական և ոռւս գրականութիւնից, որպէս զի գոնէ բովանդակութեան կողմից ընթերցողը մի բան ստանար։ Մարդ շատ տնգամ մնում է ապշան թէ ինչու համար են մարդիկ այս կամ այն գիրքը հրատարակում։ Մեր ստացած գրքովկներից ահա մէկը «Ակնարկ հին Հայոց բանահիւսութեան մասին», որ շատ փարզապետական ձեռվ հին ճշմարտութիւններ կամ հին եղբակացութիւններ է կրկնում։

Այս փոքրիկ գրքովկը, որ փորձում է համառօս կերպով պատմել գլխաւորապէս Մովսէս Խորենացու մէջ եղած ժողովրդական բանաստեղծութեան մնացորդ-

ների մասին, իսկապէս ոչ միայն ոչինչ նոր բան չէ աւելացնում մեր ունեցած տեղեկութիւններին, այլ անգամ աւելորդ կրկնութիւն է բազմաթիւ անգամ ծամեմած եզրակացութիւնների: Դեռ 1881 թուին հանգուցեալ գիտնական էմինը հրատարակել է մի շատ լուրջ լոգուած՝ “Մուսեյ Խօրենսկու և քրեան համարեան նոր բան ասող չէ եղել: Մկրտիչ էմինից յետոյ համարեան նոր բան ասող չէ եղել: Մկրտիչ էմինից յետոյ պ. Խալաթեանը. գիտնական Մառը, գերբարդ. եպիսկոպոսը և մանաւանդ աւելի մանրամասնօրէն «Հայ ժողովրդական առասպելներ» գրքի մէջ պ. Արեգեանը շատ աւելի լուրջ դիտողութիւններ ունին արած Երուանդեան Տիգրանի, Արտաւազի, Արտաշէսի և Սաթինիկի ու Վարդգէսի մասին աւանդած երգերի նկատմամբ: Մասիսի քաջքերը, որ բռնեցին Արտաւազգին ազատ Մասիսի վերայ. Վահագնի ծննդեան նկարագրութիւնը «Երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով» երգով, Արտաշէսի հարսանիքի և Սաթինիկի փախցնելու մասին «Հեծաւ արի արքայն ի սեաւն գեղեցիկ» առասպելը—ահա բոլոր փշրանքները, որ մեր մատենագրութիւնը պահել է ժողովրդական հին բանաստեղծութիւնից: Եւ եթէ ոչ ոք մի նոր բան չունի ասելու ալս մնացորդների մասին, իրաւ աւելորդ է կրկնութիւններով զբաղեցնել ընթերցողի ժամանակը: Ահա ալս հանգամանքը թող չկրիպէ մեր գրողների ուշագրութիւնից և հայերէն գրքերի տարածման արգելառիթ հանգամանքներին թող չաւելացնեն մի նոր գժուարութիւն—վատ գրքեր:

Գ. ԵՆԴ

Աղա Նեղորի բանաստեղծութիւններ: II Պրակ: Թարգմ.  
Յ. Յակովեան. 1904

Իտալական բանաստեղծունու մասին ձևումանց արդէն տուել է տեղեկութիւն իւր ընթերցողներին նոյն պ. Յակովեանի թարգմանութեան առիթով: Ներկայ երկրորդ պրակը պարունակում է Աղա Նեղորու 23 աւելի կենսական և հիւթալի ոտանաւորները: